ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2024 թվականի հոկտեմբերի 28-ին կայացած գիտական Խորհրդի N 4 նիստի

Նախագահ – Ս.Ս.Քելյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 25-ը (ցուցակը կցվում է)

Խորհրդի նախագահ Ս.Ս.Քելյանը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. **Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետին կից խորհրդատվական մարմնի ձևավորում** /զեկ.դեկան Ս.Ս.Քելյան/

2. **Մագիստրոսների մասնագիտական պրակտիկաների կազմակերպումը ֆակուլտետում** /զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

3. **2024/2025 ուստարվա հեռակա ուսուցման դասընթացների կազամկերպումը ֆակուլտետում** /զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

4. **1-ին կուրսեցիների հետ տարվող աշխատանքներն ամբիոններում** /զեկ. ամբիոնի վարիչներ/

5. **2024/2025 ուստարվա 1-ին և 2-րդ միջանկյալ քննությունների կազմակերպման ընթացքը ֆակուլտետում** /զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

6. **«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների քննարկում** /զեկ.գրասենյակի ղեկ.-դեկանի տեղ. Գ.Փ.Ալեքսանյան/

7. **Գիտական հաղորդում** «ՀՀ-ում տեխնիկական մշակաբույսերի զարգացման և տարածքային կազմակերպման ագրոաշխարհագրական հիմնախնդիրները» թեմայով /զեկ.Ընդհանուր աշխ. ամբ. հայցորդ Լիլիթ Հովհաննեսի Հակոբյան/

8. **Ընթացիկ հարցեր**

Օրակարգը հաստատելուց հետո

1. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի ***դեկան Սարգիս Քելյանի*** հաղորդումը Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետին կից խորհրդատվական մարմին (ԽՄ) ձևավորելու վերաբերյալ: Հաղորդման ընթացքում **Ս.Քելյանը** ներկայացրեց Խորհրդատվական Մարմնի կազմը:

Գնել Սանոսյան - Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Հակոբ Սիմիդյան - Շրջակա միջավայրի նախարար

Արման Վարդանյան - Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնիկական մասով տնօրեն

Հայկ Ալոյան - «Լիդիան Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն

Լևոն Ազիզյան - Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի տնօրեն

Մկրտիչ Կարապետյան – «Նոր Գեո» ՍՊԸ տնօրեն

Ներկայացվեց նաև **ԽՄ** գործունեության բնույթը, որն ուղղված է լինելու մասնագետների պատրաստման, վերապատրաստման, կրթական, կազմակերպչական, մեթոդական և գիտական ծրագրերի իրականացմանը, ուսումնական և վարչական գործընթացների կազմակերպմանն ու գործնական փորձի փոխանցմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաստատել Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետին կից Խորհրդատվական մարմին հետևյալ կազմով.

Գնել Սանոսյան - Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար

Հակոբ Սիմիդյան - Շրջակա միջավայրի նախարար

Արման Վարդանյան - Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնիկական մասով տնօրեն

Հայկ Ալոյան - «Լիդիան Արմենիա» ընկերության գործադիր տնօրեն

Լևոն Ազիզյան - Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոնի տնօրեն

Մկրտիչ Կարապետյան – «Նոր Գեո» ՍՊԸ տնօրեն

2. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավարդեկանի տեղակալ Գ.Ալեքսանյանի հաղորդումը մագիստրոսների մասնագիտական պրակտիկաների կազմակերպման վերաբերյալ: Գ.Ալեքսանյանը մասնվորապես նշեց պրակտիկաների անցկացման ժամանակահատվածը՝ 04.11-13.11 և ընթացակարգը: Ներկայացվեց, որ անցկացման իրավական հիմքերը կազմակերպություններ և ձեռնարկություններ կներկայացվեն մինչև պրակտիկաների մեկնարկը: Գիտխորհրդի անդամները տեղեկացվեցին նաև ընթացիկ ուստարվա մագիստրոսների մասնագիտական պրակտիկաների անցկացման և գնահատման ընթացակարգի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն

3. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավարդեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը 2024/2025 ուստարվա հեռակա ուսուցման 1-ին կուրսերի դասընթացների կազամկերպման վերաբերյալ: Հաղորդման ընթացքում դոց.Գ.Ալեքսանյանը ներկայացրեց հեռակա ուսուցման դասընթացների մեկնարկի և ավարտի ժամանակահատվածը, registrar համակարգում առարկայական բաղադրիչների անցկացման ընթացակարգն ու վերջնաժամկետները: Ընթացակարգային հետագա բարդություններից զերծ մնալու համար Գ.Ալեքսանյանը կոչ արեց registrar համակարգում բաղադրիչների հաստատումն իրականացնել ամբիոնի վարիչների հետ համաձայնեցնելուց հետո:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դեկան Ս.Քելյանը խոսեց 2024/2025 ուստարվա հեռակա ուսուցման որոշ մասնագիտությունների ուղղությամբ ձևավորված կուրսերի վերաբերյալ: Նշեց նաև, որ նախատեսված է դիմել ռեկտորատ/ԿԳՄՄՆ 2025/2026 ուստարում երկրաբանություն մասնագտության հեռակա ուսուցումը կազմակերպելու:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

4. ԼՍԵՑԻՆ. **Ընդհանուր աշխարհագրության** ամբիոնի վարիչի ժ/պ դոց.Ա.Թ.Գրիգորյանի, **Քարտեզագրություն և գեոմորֆոլոգիայի** ամբիոի դոցենտ Ե.Ս.Մանուկյանի, **Երկրաբանության** ամբիոնի վարիչի ժ/պ դոց.Վ.Մ.Մանուկյանի և **Սերվիս** ամբիոնի վարիչ դոց.Ս.Սուվարյանի հաղորդումը **1-ին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների** վերաբերյալ: Ներկայացվեցին 1-ին կուրս ընդունված ուսանողների թվային տվյալներն ու առանձնացվեց հաճախելիության բարձր մակարդակը: Ամբիոնի վարիչները խոսեցին ուսանողների հետ մշտապես տարվող աշխատանքի, ուսանողների խնդիրների վերաբերյալ իրազեկված լինելու և փոխադարձ կապի մասին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Դեկան Ս.Քելյանը կարևորեց և շեշտադրեց հատկապես 1-ին կուրսեցիների հետ տարվող աշխատանքը, որպես ուսման հետագա տարիների ամուր հիմքի ստեղծում:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Ալեքսանյանի հաղորդումը **2024/2025 ուստարվա 1-ին և 2-րդ միջանկյալ քննությունների կազմակերպման վերաբերյալ:** Ներկայացվեցին կազմակերպչական հարցերում ծագող խնդիրները, քննական ժամանակացույցում փոփոխություններ կատարելու կարգը: Գ.Ալեքսանյանը նշեց, որ ուսման վարձը չվճարած ուսանողները չեն թույլատրվում մասնակցել քննության: Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալը կոչ արեց խորհրդի անդամներին առաջնորդվել գնահատման ընթացակարգով և նախքան registrar համակարգ գնահատականների մուտքագրումն ու հաստատումը տեղեկացնել ուսանողներին գնահատականների վերաբերյալ՝ տալով ուսանողներին գնահատականի բողոքարկման հնարավորություն:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

6. ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը **«Դասախոսն ուսանողի աչքերով» սոցիոլոգիական հարցման արդյունքների** վերաբերյալ: Հաղարդման ընթացքում Գ.Ալեքսանյանը ներկայացրեց գնահատված դասախոսների ցանկը, ֆակուլտետի, դեկանատի և ամբիոնների գնահատված տվյալների միջին արդյունքները: Գ.Ալեքսանյանը ցավով նշեց, որ սոցհարցմանը մասնակցել են քիչ թվով ուսանողներ՝ մոտ 10%, չնայած այն բանին, որ տեղեկացվում են սոց.հարցումների մեկնարկի վերաբերյալ էլեկտրոնային նամակների միջոցով: Հարցման մանրամասն տվյալները տրամադրվել են ամբիոնի վարիչները, ովքեր հնարավորություն ունեն քննարկել արդյունքները թիրախային դասախոսների հետ:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանը, ով խոսեց հարցման մասնակցության ցածր ցուցանիշի մասին: Առաջարկեց ամբիոններում քննարկել սոցհարցման արդյունքները և հերթական նիստին ներկայացնել առաջարկություններ բարձրացված խնդիրները լուծելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ամբիոններում քննարկել գնահատման արդյունքները և ներառել հերթական խորհրդի նիստի օրակարգային հարցերի ցանկում:

7. ԼՍԵՑԻՆ. Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ Լիլիթ Հովհաննեսի Հակոբյանի գիտական հաղորդումը «ՀՀ-ում տեխնիկական մշակաբույսերի զարգացման և տարածքային կազմակերպման ագրոաշխարհագրական հիմնախնդիրները» թեմայով կատարված աշխատանքների վերաբերյալ:

ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ. Սերվիս ամբիոնի վարիչ **դոց.Ս.Սուվարյանը**, Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի **պրոֆեսոր Պ.Էֆենդյանը**, Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի **դոցենտ Վ.Մարգարյանը** հարցրեցին, թե որն է արդյո՞ք աշխատանքի նորույթը: Հարցադրումների ընթացքում թիրախավորվեց քարտեզների վերնագրերի ձևակերպումը, առանձին ուշադրություն հրավիրվեց

տերմինաբանության կիրառմանը, աշխատանքի բովանդակային ներկայացմանը ինչպես նաև վերջինիս ծավալը: Հետաքրքրվեցին թե ո՞րն է աշխատանքի տարբերությունը բնագավառի նախորդ աշխատանքներից:

Հնչեցրած հարցերին հայցորդ Լ.Հակոբյանի կողմից տրված պատասխանները սպառիչ չէին:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր **Վ.Բոյնագրյանը** գիտխորհրդի ուշադրությունը հրավիրեց գրականության ցանկին. – «Ցանկալի կլիներ հեղինակը ծանոթ լիներ բնագավառի նոր գրականությանը, որը ուղիղ կապ ունի աշխատանքի որակի հետ», նշեց նա: Մանրամասնորեն ներկայացրեց նաև աշխատանքում առկա տեխնիկական խնդիրները:

Սերվիսի ամբիոնի վարիչ դոցենտ **Ս.Սուվարյանը** ողջունեց աշխատանքը, կոչ արեց նպաստել երիտասարդների առաջընթացին: Ըստ դոց.Ս.Սուվարյանի ներկայացված աշխատանքում ակնառու է վերնագրի, դրված նպատակների, խնդրների ու դրանց լուծումների, ուսունասիրման օբյեկտների ու առարկայի անհաապատասխանությունը:

Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր **Պ.Էֆենդյանը** առանձնացրեց Լիլիթ Հակոբյանի աշխատասիրությունն ու նպատակասլացությունը միևնույն ժամանակ նշելով ներկայացված աշխատանքում տերմինաբանության ճիշտ կիրառությունը, նշեց աշխատանքի մեծածավալ լինելը:

Ղեկավար, Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտ **Ա.Հ.Պոտոսյանը** նշեց, որ կատարվել է բավականին մեծ ծավալի աշխատանք, հիմնավորեց աշխատանքում օգտագործված հին գրականության օգտագործումը, նշեց, որ աշխատանքը ձևավորվել է ճշգրիտ և թարմ տվյալների հիման վրա, որոնք փորձնական և հաշվարկային մեթոդներով ստացել է հեղինակը:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ **Գ.Փ.Ալեքսանյանը** նշեց, որ «ՀՀ-ում տեխնիկական մշակաբույսերի զարգացման

և տարածքային կազմակերպման ագրոաշխարհագրական հիմնախնդիրները» վերնագրով ատենախոսական աշխատանքը ներկայացվող տեսքով անթույլատրելի է պաշտպանության: Առաջարկեց վերանայել և հիմնավորել գիտական նորույթը, խմբագրել աշխատանքը բովանդակային առումով, վերանայել տեսամեթոդաբանական հարցերը ինչպես նաև գրականության ցանկը: Նշեց նաև, որ աշխատանքում չեն արտացոլվում դրված խնդիրների լուծումները: Սերվիսի ամբիոնի վարիչ **դոց.Ս.Սուվարյանը** և Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի **պրոֆ.Պ.Էֆենդյանն** առաջարկեցին վերաշարադրել աշխատանքը՝ հաշվի առնելով հնչեցված դիտողություններն ու նկատառումները:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի հայցորդ **Լիլիթ Հովհաննեսի Հակոբյանի** «ՀՀ-ում տեխնիկական մշակաբույսերի զարգացման և տարածքային կազմակերպման ագրոաշխարհագրական հիմնախնդիրները» վերնագրով ատենախոսական աշխատանքը վերադարձնել լրամշակման համար:

8. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ

8.01 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Ս.Ս.Քելյանի հաղորդումը վաստակավոր երկրաբան Պետրոս Ալոյանի անվան գեոինովացիաների կրթական կենտրոնի բացման վերաբերյալ: Նա խոսեց նաև Երկրաբանության, մասնավորապես հանքարդյունաբերության մեջ մեծ գիտնականի անգնահատելի ավանդի մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

8.02 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի գրասենյակի ղեկավար-դեկանի տեղակալ Գ.Փ.Ալեքսանյանի հաղորդումը ֆակուլտետի 2025-2030թթ ժամանակահատվածի ռազմավարության պլանի նախագծի մշակման վերաբերյալ: Կոչ արեց ամբիոնի վարիչներին քննարկել ամբիոններում և

դեկանատ ներկայացնել բովանդակային առաջարկություններ նախագծի հետագա ամփոփման համար:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

8.03 ԼՍԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Ս.Քելյանի հաղորդումը գործուղման մեկնող աշխատակիցների հաշվետվությունները գիտխորհրդում ներկայացնելու վերաբերյալ: Զեկուցողները մանրամասնորեն կներկայացնեն ֆակուլտետի ձեռքբերումները և ոլորտի զարգացման գիտահետազոտական թիրախային կետերը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

8.04 ԼՍԵՑԻՆ. «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Աշխարհագրություն» դասիչ՝ ԻԴ. 03.01 մասնագիտությամբ ասպիրանտ **Նելլի Սեյրանի Ալեքսանյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիր **«ՀՀ անտառային գեոհամակարգերի ներուժի գնահատումը»** և գիտական ղեկավար աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լևոն Մարտիրոսյանին հաստատելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամի «Աշխարհագրություն» դասիչ՝ ԻԴ. 03.01 մասնագիտությամբ ասպիրանտ **Նելլի Սեյրանի Ալեքսանյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել **«ՀՀ անտառային գեոհամակարգերի ներուժի գնահատումը»** վերնագրով և գիտական ղեկավար նշանակել աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լևոն Մարտիրոսյանին:

8.05 ԼՍԵՑԻՆ. «Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի «Աշխարհագրություն» դասիչ՝ ԻԴ. 03.01 մասնագիտությամբ ասպիրանտ **Լիլիթ Գոռի Հովհաննիսյանի** թեկնածուական ատենախոսության թեմայի վերնագիր **«ՀՀ-ում ձմեռային զբոսաշրջության զարգացման բնառեսուրսային ներուժի**

գնահատումը» և գիտական ղեկավար աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լևոն Մարտիրոսյանին հաստատելու հարցը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան հիմնադրամի «Աշխարհագրություն» դասիչ՝ ԻԴ. 03.01 մասնագիտությամբ ասպիրանտ **Լիլիթ Գոռի Հովհաննիսյանի** թեկնածուական ատենախոսության թեման հաստատել **«ՀՀ-ում ձմեռային զբոսաշրջության զարգացման բնառեսուրսային ներուժի գնահատումը»** վերնագրով և գիտական ղեկավար նշանակել աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լևոն Մարտիրոսյանին:

8.06 ԼՍԵՑԻՆ. Քարտեզագրության և գեոմորֆոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր Պ.Ս.Էֆենդյանի հաղորդումը **«Կլիմայի փոփոխության սցենարների պայմաններում անտառվերականգնման ներուժի գնահատում՝ տարածական մոդելավորման և հեռազննման տվյալների կիրառմամբ»** վերնագրով **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե** գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեմայի հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. **«Կլիմայի փոփոխության սցենարների պայմաններում անտառվերականգնման ներուժի գնահատում՝ տարածական մոդելավորման և հեռազննման տվյալների կիրառմամբ»** վերնագրով գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեման երաշխավորել ներկայացնելու **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**:

8.07 ԼՍԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանի հաղորդումը **«Երևան քաղաքի սոցիալ-մշակութային ծառայությունների տեղաբաշխման վրա ազդող գործոնները և զարգացման հեռանկարները»** վերնագրով **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե** գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեմայի հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. **«Երևան քաղաքի սոցիալ-մշակութային ծառայությունների տեղաբաշխման վրա ազդող գործոնները և զարգացման հեռանկարները»** վերնագրով

գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեման երաշխավորել ներկայացնելու **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**:

8.08 ԼՍԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի պրոֆեսոր Ա.Ռ.Ավագյանի հաղորդումը **«ՀՀ կայուն զարգացման մարտահրավերները 21-րդ դարի արդի աշխարհաքաղաքական շրջանակներում»** վերնագրով **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե** գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեմայի հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. **«ՀՀ կայուն զարգացման մարտահրավերները 21-րդ դարի արդի աշխարհաքաղաքական շրջանակներում»** վերնագրով գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեման երաշխավորել ներկայացնելու **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**:

8.09 ԼՍԵՑԻՆ. Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտ Ն.Ա.Հարությունյանի հաղորդումը **«Վայոց ձորի մարզում հողօգտագործման էկոլոգիական ուղղվածությամբ պլանավորում»** վերնագրով **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե** գիտահետազոտական/ատենախոսական («Երկրաբնապահպանություն» ԻԴ.04.01) թեմայի հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. **«Վայոց ձորի մարզում հողօգտագործման էկոլոգիական ուղղվածությամբ պլանավորում»** վերնագրով գիտահետազոտական/ատենախոսական («Երկրաբնապահպանություն» ԻԴ.04.01) թեման երաշխավորել ներկայացնելու **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**:

9.10 ԼՍԵՑԻՆ. Ընդհանուր աշխարհագրության ամբիոնի դոցենտ Ա.Հ.Պոտոսյանի հաղորդումը **«Զբոսաշրջության և ռեկրեացիայի տարածքային կազմակերպման առանձնահատկությունները և հիմնախնդիրները ՀՀ-ում»** վերնագրով **ՀՀ ԿԳՄՄՆ**

բարձրագույն կրթության և գիտության կոմիտե գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեմայի հայտ ներկայացնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՅԻՆ. **«Զբոսաշրջության և ռեկրեացիայի տարածքային կազմակերպման առանձնահատկությունները և հիմնախնդիրները ՀՀ-ում»** վերնագրով գիտահետազոտական/ատենախոսական («Աշխարհագրություն» ԻԴ.03.01) թեման երաշխավորել ներկայացնելու **ՀՀ ԿԳՄՄՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտե**:

Գիտական խորհրդի նախագահ **Ս.Ս.Քելյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ե.Ս.Մանուկյան**